

ոչ այս՝ որ ժուժկալութեան նախկին կանոնն ընկած էր ուժէ: Մանաւանդ թէ զայն յարգողները մեր մէջ փոքրամասնութիւն մը կազմած են միշտ, սկսեալ Ե դարէն իսկ, որով եւ առանձին յիշատակութեան ու զովեստից արժանացած: Եղիշէ երբ պիտի խօսի հարաւայնոց չորարեկ սննդեան վրայ, կը փութայ շեշտել անոր եւ ընդհանուր հայ վանականաց սովորական կերակրոյն մէջ եղած զգալի տարբերութիւնն՝ ըսելով, « Դու իբրեւ լսիցես զուտելն, մի՛ առ մերս ընթանայցես » (214): Այո, այդ դարէն իսկ այլափոխուած էր հայ կրօնաւորին ճաշը:

Պղտոր լճի մէջ դժուարաւ կը գտնուին ականակիտ խաւեր: Աշխարհիկ դասուն յաճախեալ չափազանցութիւնք իրենց վրտանգաւոր ազդեցութիւնը պիտի տարածէին ամբողջ հայ զանգուածին վրայ, ու զեղծումը պիտի սպրդէր նաեւ մենաստանին սեմէն ներս: Եւ հոդ, կրօնաւորական կենաց դեռ թարմ շրջանին անգամ, մեր վանականք կը նկարագրուին՝ « անյագ պակշտեալ հայել ի կեանս աշխարհիս », եւ կ'իւրացնեն հեշտակեաց մեծատան զրգանքները. բարձրագահ ու փափուկ անկողինք, վայելուչ զգեստներ ու կօշիկ, երկվարներ, ապարանք, ստացուածք եւ ան-